



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“02” ..... 07 ..... 2020թ.

N..... 48-Ը .....

**Հ Ր Ա Մ Ա Ն \_\_\_\_\_ Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի  
N 37-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 37-Լ հրամանով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի 15-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«15. Կոմիտեի նախագահին անմիջական հաշվետու են Կոմիտեի նախագահի տեղակալը, գլխավոր քարտուղարը, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների

ղեկավարները, Կոմիտեի նախագահի օգնականը և \_\_\_\_\_ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:»

2) Հավելվածի 23-րդ և 24-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ

«23. Կոմիտեի \_\_\_\_\_ հիմնական \_\_\_\_\_ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Թոփչքային պիտանիության վարչություն

2) Ավիացիոն անվտանգության վարչություն.

3) Թոփչքային գործունեության վարչություն.

4) Օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչություն.

5) Օդային փոխադրումների կարգավորման վարչություն.

6) Ներքին աուդիտի բաժին:

24. Կոմիտեի աջակցող մասնագիտական ստորաբաժանումներն են. \_\_\_\_\_

1) Իրավաբանական վարչություն.

2) Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն.

3) Անձնակազմի կառավարման բաժին.

4) Ընդհանուր բաժին.

5) Առաջին բաժին:»:

02.07.2020

X 

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս. Պապիկյան